

կիրճերը կամուռ, մէկ հատ չի փախցներ, բայց ի՞նչ օգուտ, երկու տարի չի տուեր այդ նզով ազգը դարձեալ կ'ուզայ եւ աւելի զօրութեամբ եւ անհամար. հայը պէտք է համբերէ մինչեւ որ գայ՝ դանակը ոսկրին կռթնի՝ է՛լ համբերելու ճարը հատնի, այն ատեն սմբած գառը առիւծ կը դառնա, լեռն ու դաշտը կը գոռան. Յայը յանկարծ կանդնեցաւ, մեռելն էլ յարութիւն առաւ, անհաւատը դաշտը դիակով կը պարարտացնէ: Յարիւր տարի ըսի, հարիւր յիսուն էլ կայ, որ մենք այդ խաղը կը խաղանք, ոչ նոքա ձանձրացան զմեզ գերելէ եւ շարդելէ, ոչ մենք զանոնք կոտորելէ ու անհետ ընելէ: Քայց աստուծոյ կամքը պէտք է կատարի, մինչեւ որ Ս. Կարապետ իւր զօրութիւնը ցցնէ եւ մեզ կարողութիւն տա բոլորովին ջնջելու այս անօրէն ժողովուրդը: Դուք գիտէք, եղբա՛րք եւ որդեակք, թէ մեր Բագարատ իշխանը ելաւ զնաց այդ անհաւատ արաբին, որ բարեկամ ինքզինքը կը ցցներ, որ երդում կ'ըներ իր մարգարէին վրայ, իր օրէնքին վրայ, որ նորա վնաս ամենեւին չհասցնէ, եւ գիտէք ի՞նչ եղաւ. որովհետեւ մարգարէն սուտ էր, օրէնքն անօրէնութիւն էր, երդմունքին դրժեց. Բագարատը, զակնները, ընտանիք, ամէնքը շղթայեց, ղրկեց Արաբստան, եւ ինք նստեր նորա Մշու պալատն, սառած մարմինը կը տաքցնէ, Լուսաւորչայ հաւատքը օրը հինգ անգամ կը հայիոյէ, եւ ա՛յդ Ս. Կարապետի աչից առաջ քթին տակ. աստուած այդպիսի բան չի ներեր, դորայ վրեժը կը լուծէ: Մինչեւ ե՛րբ ուրեմն քնենք, սասնցին ե՛րբ ցրտեն թմրած է, որ հիմա թմրի. եթէ արեւուն ճառագայթ այդ սեւերես ազգը կը զօրացնէ՝ ցուրտն էլ հայուն զօրութիւն պէտք է լինի: Գիւղապետ եղբա՛րք, խորհեցէք եւ ի՞նչ ընելիքնիդ որոշեցէք, վասընզի Ս. Կարապետ վտանգի մէջ է:

Քահանային տայս երկար քարոզէն վերջ խոր մռնչիւն մը ելաւ հիւղական սրահին մէջ, ամէն մարդ իւր ընկերոջ հետ կը խոսեր եղածին եւ ընելիքին վրայ, բայց ոչ ոք մեծ ձայն մը չէր արձկեր, իբրեւ թէ ամէն ոք կարծիք ուներ, բայց ոչ ոք քաջասրտութիւն զայն համարձակ խօսելու:

Վերջապէս երիտասարդ մը ելաւ ուժով ձայն մը ձգեց. «Եթէ ամէնքդ կը խօսիք եւ ոչ մէկդ կը խօսիք. ո՞ւր է Յովնան գիւղապետը, նա